**Ֆինանսական Աջակցության Քաղաքականություն և Ֆինանսական Աջակցության Քաղաքականություն (Բարեգործական խնամք/Երեխա խնամք/Medicaid) – Պարզ լեզվով Ամփոփում**

Pascack Valley-ում HackensackUMC-ի Ֆինանսական Աջակցության Քաղաքականություն և Ֆինանսական Աջակցության Քաղաքականություն (Բարեգործական խնամք/Երեխաների խնամք/Medicaid) (այսուհետ՝ "FAP") գոյություն ունի, որպեսզի իրավունակ հիվանդներին տրամադրի մասամբ կամ ամբողջովին զեղչված շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջապահական խնամքի այլ ծառայություններ, որոնք տրամադրվում են Pascack Valley-ում HackensackUMC-ի կողմից: Ֆինանսական Աջակցության կարիք ունեցող հիվանդները պետք է դիմեն ծրագրի համար, որի ամփոփումը ներկայացված է ստորև:

<u>Իրավունակ Ծառայություններ.</u> Pascack Valley-ում HackensackUMC-ի կողմից տրամադրվող և Pascack Valley-ում HackensackUMC-ի կողմից հաշիվ ներկայացված շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջապահական խնամքի այլ ծառայություններ: FAP-ը վերաբերում է միայն այն ծառայություններին, որոնց հաշիվը ներկայացվում է Pascack Valley-ում HackensackUMC-ի կողմից: Այլ ծառայությունները, որոնց համար հաշիվ են ներկայացնում այլ մատակարարներ, ինչպիսիք են՝ բժիկները կամ տարրալուծարան, իրավունակ չեն FAP-ի ներքո:

<u>Իրավունակ հիվանդներ.</u> Իրավունակ ծառայություններ ստացող հիվանդներ, ովքեր ներկայացրել են Ֆինանսական աջակցության լրացված դիմումը (ներառյալ համապատասխան փաստաթղթերը/տեղեկությունները) և ովքեր համարվել են իրավունակ Pascack Valley-ում HackensackUMC-ի Ֆինանսական աջակցության համար:

<u>Ինչպե՞ս կարող եմ դիմել:</u> FAP-ը և համապատասխան Դիմումաձևը կարելի է ձեռք բերել/լրացնել/ներկայացնել հետևյալ կերպ՝

<u>Տեսեք տեղեկությունները Բժշկական Կենտրոնի Կայքում՝</u> Անձը կարող է ֆինանսական աջակցության վերաբերյալ տեղեկությունները տեսնել առցանց՝ հետևյալ կայքում՝
http://www.hackensackum
cpv.com/

<u>Դիմում.</u> Անձը կարող է դիմել ֆինանսական աջակցության համար՝ լրացնելով դիմումի թղթային տարբերակը: Թղթային տարբերակով դիմումաձևն անվճար հասանելի է հետևյալ որևէ միջոցով՝

<u>Փոստով.</u> Գրելով հետևյալ հասցեով և խնդրելով ֆինանսական աջակցության դիմումաձևի թղթային տարբերակը՝

250 Old Hook Rd.
Westwood, NJ 07675

<u>Անձամբ.</u> Անձամբ այցելելով Ֆինանսական աջակցության բաժին (երկուշաբթիից ուրբաթ օրեր, 10:00AM-6:00 PM), որը գտնվում է հետևյալ հասցեով՝

250 Old Hook Rd.
Westwood, NJ 07675

<u>Հեռախոսով.</u> Ֆինանսական աջակցության բաժին կարելի է զանգահարել (201)-383-1043 հեռախոսահամարով:

<u>Մատչելի Լեզուներ.</u> Ֆինանսական Աջակցության Քաղաքականությունը, դիմումաձևը և Պարզ լեզվով ամփոփումը մատչելի են անգլերենի սահմանափակ իմացությամբ

Hackensack Meridian *Health*
Pascack Valley Medical Center

(“LEP”) բնակիչների բազմաթիվ մայրենի լեզուներով, որը կազմում է հինգ (5%) տոկոսից պակաս կամ 1,000 անձ Բժշկական Կենտրոնի կողմից սպասարկվող հիմնական ծառայության տարածքում:

Լրացված դիմումաձևերը կարող եք ուղարկել Ֆինանսական Աջակցության բաժին հետևյալ հասցեով՝ 250 Old Hook Rd.
Westwood,
NJ 07675:

<u>Ֆինանսական Աջակցության Իրավունակության որոշում.</u> Ընդհանուր առմամբ, Իրավունակ անձինք իրավունակ են Ֆինանսական Աջակցության համար՝ օգտագործելով սահող սանդղակը, երբ նրանց ընտանեկան եկամուտը կազմում է Դաշնային Կառավարության Աղքատության Ուղեցույցների (Federal Government’s Federal Poverty Guidelines, FPG) 500% կամ դրանից պակաս: <u>Իրավունակություն ֆինանսական Աջակցության համար՝ նշանակում է, որ Իրավունակ անձանց խնամքը ամբողջովին կամ մասամբ կվճարվի, և նրանց հաշիվ չի ներկայացվի ավելի մեծ գումարի համար, քան ապահովագրված անձանց «Հիմնականում Ներկայացված Հաշվի Գումարը» (Amounts Generally Billed, AGB) (AGB, ինչպես սահմանված է Ներքին Եկամուտների Ծառայության IRC Բաժին 501(r)-ում):</u> Միմիայն Ընտանեկան եկամտի և FPG-ի վրա հիմնված Ֆինանսական Աջակցության մակարդակները որոշվում են, եթե եկամուտը կազմում է FPG-ի մինչև 500%-ը:

<u>Ծանուցում.</u> FPG-ից դուրս այլ չափանիշներ նույնպես նկատի են առնվում (օրինակ՝ կանխիկ դրամի կամ այլ ակտիվների մատչելիություն, որոնք կարող են վերածվել կանխիկ դրամի, և ամսական զուտ եկամտի ավելացում, ամսական տնային տնտեսությունների ծախսերի նկատմամբ), որոնք կարող են հանգեցնել նախորդի բացառությունների: Եթե Ընտանեկան Եկամուտ չի ներկայացվել, անհրաժեշտ կլինի տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ինչպես եք հոգում առօրյա ծախսերը: Pascack Valley-ում HackensackUMC-ի Ֆինանսական Աջակցության Բաժինը ուսումնասիրում է ներկայացված ամբողջովին լրացված դիմումները և որոշում է Ֆինանսական Աջակցության համար Իրավունակությունը՝ համաձայն HackensackUMC-ի Ֆինանսական Աջակցության Քաղաքականության: Ամբողջովին չլրացված դիմումները չեն ուսումնասիրվի, սակայն դիմողներին կտեղեկացնեն այդ մասին և հանարավորություն կընձեռնեն ներկայացնել պակաս փաստաթղթերը/տեղեկությունները:
Օգնության, աջակցության կամ հարցերի համար խնդրում ենք այցելել կամ զանգահարել Ֆինանսական Աջակցության Բաժին (երկուշաբթիից ուրբաթ, 10:00AM-6:00 PM), որը գտնվում է 250 Old Hook Rd., Westwood, NJ 07675 հասցեով կամ զանգահարել (201)-383-1043 հեռախոսահամարով: